ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 Մայիսի 2017 թվականի N 50

ԴԱՎԻԹ ԱՐՄԵՆԻ ՔՈՉԱՐՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10,11,22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը,որ Դավիթ Արմենի Քոչարովին սեփականության իրավունքով պատկանող, Ձորաղբյուր 2-րդ զանգված 62 թաղամաս թիվ 4 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Դավիթ Արմենի Քոչարովին սեփականության իրավունքով պատկանող Ձորաղբյուր 2-րդ զանգված 62 թաղամաս թիվ 4 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված S=29.70քմ <<Ինքնակամ այգետնակը>> համարել օրինական՝ հիմք ընդունելով <<ԳԵՈԿԱԴ 55>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:
2. Հաշվի առնելով ,որ ինքնակամ կառույցը կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ինքնակամ շինության օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ այգեհողամասին կից և իր կողմից օգտագործվող 62.5քմ ավել զբաղեցրած հողակտորը համարել իր սեփականությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

26 Մայիսի 2017 թվականի N 51

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 2-րդ մասով, հիմք ընդունելով Ձորաղբյուր համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 25-ի N19 որոշումը և քաղաքացու դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մեղորա Իսրաելի Ձախմախչյանին սեփականության իրավունքով պատկանող, ծածկ.՝ 07-042-0000-0000, 2480քմ գյուղատնտեսական նշանակության հողատարածքին կից համայնքային սեփականություն հանդիսացող, ծածկ.՝ 07-042-0407-0002, 612քմ գյուղատնտեսական նշանակության հողատարածքն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով վաճառել նրան:

2. Պարտավորեցնել նրան 612քմ հողամասի համար համայնքի բյուջե վճարել 23870 /քսաներեք հազար ութ հարյուր յոթանասուն/ դրամ գումար, որը պետք է փոխանցվի Աբովյանի ՏԳԲ-ի՝ 900105221171՝ հողի օտարումից եկամուտներ, հաշվեհամարին :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ